«ԱԳ ԻՄՊԵՔՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական հաշվետվություններ
և անկախ աուդիտորական եզրակացություն
2021 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3
Շահույթի կամ վնասի եվ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 7
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 11

Աուդիտորական ծառայությունների ականացման լիցենզիա ԱԾ N 1 20 0284 Տրված՝ 18.12.2020 Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների Պալատ հասարակական կազմակերպության խորհրդի թիվ 11ա որոշմամբ

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

ՀՀ,ք.Երևան 0010,

Տիգրան Մեծի 4.

Հեռ. +374 10 524 724

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱԳ Իմպեքս» ՍՊԸ-ի սեփականատերերին՝

Վերապահումով դրական կարծիք

Մեր կողմից իրականացվել է «ԱԳ Իմպեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացի Վերապահումով դրական կարծիքի արտահայտման հիմք բաժնում նկարագրված հանգամանքի հնարավոր ազդեցությունից, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Վերապահումով դրական կարծիքի արտահայտման հիմք

Ինչպես նկարագրված է սույն ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 18-ում, Ընկերությունը 2020 թվականին տրամադրել է 222,950 ԱՄՆ դոլար (113,931 հազ. ՀՀ դրամ 2020թ և 107,047 հազ. ՀՀ դրամ 2021թ. հաշվեկշռային արժեքներով) անտոկոս փոխառություն փոխկապակցված կողմին: Ընկերությունը չի ճանաչել այս ֆինանսական ակտիվը իրական արժեքով՝ տրման ամսաթվի դրությամբ և չի հաշվառել համապատասխան ակտիվը 2020 և 2021 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես պահանջվում է ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի համաձայն:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Սույն ստանդարտներով սահմանված մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների վարքագծի միջազգային ստանդարտների խորհրդի՝ *Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի* (ՀՎՄՍԽ վարքագիրք), և մենք կատարել ենք վարքագծի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀՎՄՍԽ վարքագրքի: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր՝ վերապահումով դրական կարծիքը արտահայտելու համար:

Այլ տեղեկատվություն

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ 2020թ. Ընկերության ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել անկախ աուդիտորի կողմից:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրում կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ այլ տեղեկատվությանը, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ: Եթե մեր կատարած աշխատանքը հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ այլ տեղեկատվությունը պարունակում է էական խեղաթյուրումներ, մենք պարտավոր ենք տեղեկացնել այդ փաստի մասին: Մենք այդպիսի փաստերի մասին տեղեկություն չունենք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու, անհրաժեշտության դեպքում՝ անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական հաշվետվություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, ինչը, սակայն, երաշխիք չէ, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումները, եթե այդպիսիք առկա են: Ֆինանսական հաշվետվություններում խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ ողջամտորեն կարելի է ակնկալել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Դիտարկում ենք աուդիտին առնչվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող տեղեկատվության բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական հաշվետվությունում հղում կատարել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այսուհանդերձ, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող էական թերությունների մասին:

Աղավնի Բաբայան
Տնօրեն/Բաժնետեր

Դավիթ Խաչատրյան
Աուդիտոր

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ
Հունիսի 29, 2022 թ.

«ԱԳ Իմպեքս» ՍՊԸ

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2021 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար ՀՀ դրամով

	Ծան.	2021թ.	2020թ.
Հասույթ	4	15,453,351	9,833,719
Վաճառքի ինքնարժեք	5	(14,409785)	(9,120,607)
Համախառն շահույթ		**1,043,566**	**713,112**
Իրացման ծախսեր	9	(17,191)	(11,703)
Արժեզրկման կորուստ	8	(48,640)	(151,908)
Ֆինանսական ծախսեր	7	(56,741)	(56,576)
Վարչական ծախսեր	6	(98,792)	(34,734)
Այլ ծախսեր		(2,261)	(2,681)
Այլ (վնաս)/օգուտ		400,486	492,330
Շահույթ՝ նախքան շահութահարկով հարկում		**1,220,427**	**947,840**
Շահութահարկի գծով ծախս	17	(158,442)	(93,878)
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ ԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏ		**1,061,985**	**853,962**

Գևորգ Խաչատրյան
Տնօրեն

Դիանա Մկրտչյան
Ֆինանսական Բաժնի Ղեկավար

Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հունիսի 29, 2022թ.

11-31 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԱԳ Իմպեքս» ՍՊԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
Հազար ՀՀ դրամով

	Ծան.	2021թ. դեկտեմբերի 31	2020թ. դեկտեմբերի 31
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	15	115,677	31,380
Ոչ նյութական ակտիվներ	16	60	68
Հետաձգված հարկային ակտիվներ	17	27,239	18,516
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	18	107,047	113,832
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**250,023**	**163,796**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	10	538,049	589,473
Առևտրային և այլ դեբիտորական պարտք	12	2,902,001	2,016,295
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	9,496	3,578
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**3,449,546**	**2,609,346**
Ընդամենը ակտիվներ		**3,699,569**	**2,773,142**
Սեփական կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ		36,537	30
Չբաշխված շահույթ		1,372,892	1,041,144
Ընդամենը սեփական կապիտալ		**1,409,429**	**1,041,174**
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Վարկեր և փոխառություններ	13	830,291	637,643
		830,291	**637,643**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	13	820,561	518,871
Շահութահարկի գծով ընթացիկ կրեդիտորական պարտքեր		88,782	79,550
Առևտրային և այլ կրեդիտորական պարտք	14	548,009	493,748
Պահուստներ	17	2,497	2,156
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**1,459,849**	**1,094,325**
Ընդամենը պարտավորություններ		**2,290,140**	**1,731,968**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**3,699,569**	**2,773,142**

11-31 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԱԳ Իմպեքս» ՍՊԸ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
Հազար ՀՀ դրամով

	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ	**30**	**187,182**	**187,212**
Տարվա շահույթ և այլ համապարփակ եկամուտ	-	853,962	**853,962**
Մնացորդը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**30**	**1,041,144**	**1,041,174**
Կանոնադրական կապիտալի համալրում	36,507	-	**36,507**
Տարվա շահույթ և այլ համապարփակ եկամուտ	-	1,061,985	**1,061,985**
Հայտարարված շահաբաժիններ	-	(730,237)	**(730,237)**
Մնացորդը 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**36,537**	**1,372,892**	**1,409,429**

11-31 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԱԳ Իմպեքս» ՍՊԸ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
Հազար ՀՀ դրամով

	Ծան.	2021թ.	2020թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Հաճախորդներից ստացված գումարներ		18,357,637	11,871,550
Մատակարարներին տրված վճարներ		(14,606,165)	(9,744,668)
Աշխատողներին տրված վճարներ		(33,410)	(14,689)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ		**3,718,062**	**2,112,193**
Վճարված շահաբաժիններ		(693,725)	-
Վճարված տոկոս		(15,143)	(28,612)
Այլ գործառնական դրամական արտահոսքեր		(680)	(179)
Վճարված հարկեր բացի շահութահարկից		(3,672,428)	(2,392,916)
Վճարված շահութահարկ		(171,470)	(104,445)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**(835,384)**	**(413,959)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների գծով զուտ վճարումներ		(12,417)	(12,927)
Փոխառությունների վերադարձից մուտքեր		17,174	94,210
Տրված փոխառություններ		(18,950)	(237,882)
Ներդրումային գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ		**(14,193)**	**(156,599)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Ստացված վարկեր և փոխառություններ		3,445,750	2,731,283
Վարկերի և փոխառությունների մարում		(2,621,210)	(2,162,107)
Կանոնադրական կապիտալի համալրում		36,507	-
Ֆինանսական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ		**861,047**	**569,176**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**11,470**	**(1,382)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարվա սկզբում		**3,578**	**11,317**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա		(5,552)	(6,357)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարվա վերջում		**9,496**	**3,578**

11-31 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը: